



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ..... 2

ԳԼՈՒԽ 2. ԱՌԱՋՆԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՃՈՒՐԴՆԵՐԻՆ ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ.. 3

ԳԼՈՒԽ 3. ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ 4

ԳԼՈՒԽ 4. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ 5

ԳԼՈՒԽ 5. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ 6

ԳԼՈՒԽ 6. ՌԵՊՈ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ..... 6

ԳԼՈՒԽ 7. ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 7

ԳԼՈՒԽ 8. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ..... 7



ընդհանուր հասանելի

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. <<Յունիբանկ>> բաց բաժնետիրական ընկերության Պետական պարտատոմսերով գործառնությունների իրականացման կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է <<Յունիբանկ>> ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից Պետական Պարտատոմսերով իրականացվող գործառնությունների իրականացման կարգը և պայմանները, գործունեության կանոնները, ծառայողական տեղեկությունների պահպանումը, հաճախորդների միջոցների հաշվառումը և պարտականությունը:

1.2. Բանկն իր գործառնություններն իրականացնում է՝ առաջնորդվելով 'Բանկերի և բանկային գործունեության մասին', 'Արժեթղթերի շուկայի մասին' ՀՀ օրենքներով, ՀՀ Ֆինանսների նախարարության և ՀՀ ԿԲ կողմից համատեղ ընդունված ՀՀ Պետական (գանձապետական) պարտատոմսերի (այսուհետ՝ Պարտատոմսեր) թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգերով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

1.3. Բանկը պետական պարտատոմսերով կատարվող գործառնությունների վերաբերյալ ցանկացած որոշում կայացնում է ելնելով Բանկի, ներդրումային ծրագրի դրույթներից, իրացվելիության խնդիրներից, շուկայական ռիսկերի գնահատման արդյունքներից:

1.4. Գանձապետի կամ Դեպարտամենտի տնօրենի կողմից ներկայացվում է ֆինանսական շուկայի իրավիճակը, ակնկալվող տոկոսադրույքները, պետական պարտատոմսերի թողարկման ծավալները և այլ տեղեկատվություն, որոնք անհրաժեշտ են որոշում կայացնելու համար, որից հետո քննարկվում է Բանկի Վարչությունում, Ներդրումային հանձնաժողովում և կայացվում համապատասխան որոշում ռազմավարության առումով:

1.5. Ընթացիկ գործունեության վերաբերյալ որոշումները կայացվում է և գործարքները վավերացվում է Բանկի պաշտոնատար անձանց կողմից՝ համաձայն Բանկի խորհրդի հաստատված սահմանաչափերի:

1.6. Բանկը իրականացնում է գործառնություններ Պարտատոմսերի շուկայում, մասնակցում է ՀՀ ԿԲ կազմակերպվող աճուրդներին, իրականացնում է Պարտատոմսերի առք ու վաճառք:

1.7. Սույն կարգի իմաստով՝

1.7.1. Թողարկող՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, որը գործում է համապատասխան ՀՀ օրենսդրության և պարտավորություն է կրում պարտատոմսերի սեփականատերերի առջև՝ պարտատոմսերով ամրագրված իրավունքների իրականացման ժամանակ:


1.7.2. Դիլեր՝ յուրաքանչյուր առևտրային բանկ, վարկային կազմակերպություն և այլ ֆինանսական կազմակերպություն, որը թողարկողի և բանկի հետ կնքել է պարտատոմսերի շուկայում դիլերի գործառնությունների կատարման մասին պայմանագիր: Պարտատոմսերով գործարքների իրականացման ժամանակ դիլերը գործում է իր անունից՝ իր հաշվին կամ իր անունից և ներդրողի հաշվին՝ նրա հանձնարարությամբ:

1.7.3. Ներդրող՝ Յուրաքանչյուր իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը սեփականության իրավունքով ձեռք է բերում արտատոմսեր և չի հանդիսանում դիլեր:

1.7.4. Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ (այսուհետ՝ Համակարգ)՝ պահառուի մոտ վարվող դեպո հաշիվներում պարտատոմսերի հաշվառման և պարտատոմսերով գործարքների վերջնահաշվարկների իրականացումն ապահովող համակարգ:

1.7.5. Պահառու՝ թողարկողի առջև պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման պարտավորությունների կրող, պարտատոմսերի թողարկման գլոբալ հավաստագիրը պահող և հաշվառող, պահառուական գործունեություն իրականացնող ենթակառուցվածք: Պահառուի գործառնություններն իրականացնում է ՀՀ ԿԲ:

1.7.6. Ենթապահառու՝ պահառուական գործունեություն իրականացնող ենթակառուցվածք, որտեղ ըստ առանձին ներդրողների հաշվառվում են վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող պար-

	Պետական պարտատոմսերով գործառնությունների իրականացման կարգ	Կոդ՝ 08.02.5	Խմբագրություն՝ 2.0
		Հաստատված է Բանկի Խորհրդի 17.05.2018թ. որոշմամբ	

ընդհանուր հասանելի

տատոմսերը: Ենթապահառուի գործառնություններ իրականացնում են դիլերները և գանձապետական պահառուն:

1.7.7. Դեպո հաշիվ՝ պարտատոմսերի հաշվառման համար նախատեսված պահառուի և ենթապահառուի գրառումների բազմություն, որը միավորված է ընդհանուր հատկանիշներով:

1.7.8. Աճուրդ՝ պարտատոմսերի թողարկումների առաջնային տեղաբաշխման նպատակով կազմակերպվող փակ մրցութային գործընթաց, որի ժամանակ պարտատոմս ձեռք բերելու նպատակով գնորդները ներկայացնում են հայտեր:

1.7.9. Միջնորդավճար՝ սակագնային գումար, որը գանձվում է ներդրողից՝ միջնորդային գործարքների իրականացման համար և կախված է գործարքի ծավալից:

1.7.10. Սպասարկման պայմանագիր՝ պայմանագիր, որը կնքվում է յուրաքանչյուր ներդրողի հետ, ըստ որի ներդրողին շնորհվում է դեպո հաշվի ծածկագիր:

1.7.11. Դեպո հաշվարկներ՝ ենթապահառուների և պահառուի կողմից իրականացվող գործառնությունների բազմություն, որի արդյունքում իրականացվում է պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում գործարքի մասնակիցների միջև՝ առաքում՝ վճարման դիմաց (DVP)՝ կամ՝ ազատ առաքման (առանց DVP)՝ սկզբունքով:

1.7.12. Առաքող՝ պարտատոմսերի երկրորդային շուկայի գործարքի կողմ հանդիսացող անձ, որը սեփականության իրավունքով իրեն պատկանող պարտատոմսերը փոխանցում է գործարքի մյուս կողմին:

1.7.13. Ստացող՝ պարտատոմսերի երկրորդային շուկայի գործարքի կողմ հանդիսացող անձ, որի սեփականությանը փոխանցում են գործարքի մյուս կողմին պատկանող պարտատոմսերը:

1.7.14. Արժեթուղթ՝ ՀՀ ԿԲ կամ ՀՀ ՖԷՆ կողմից թողարկված արժեթղթեր, ինչպես նաև արժանահավատ և պատշաճ կերպով գնանշված այլ արժեթղթեր:

1.7.15. Գնորդ՝ գործարքի կատարման օրը սեփականության իրավունքով Արժեթղթեր ձեռք բերող:

1.7.16. Վաճառող՝ գործարքի կատարման օրն Արժեթղթեր օտարող:

1.7.17. Ռեպո գործարքի հայտ՝ Վաճառողի կողմից գնորդին ներկայացված ռեպո գործարք կնքելու առաջարկ:

1.7.18. Հակադարձ ռեպո գործարքի հայտ՝ գնորդի կողմից Վաճառողին ներկայացված հակադարձ ռեպո գործարք կնքելու առաջարկ:

ԳԼՈՒԽ 2. ԱՌԱՋՆԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՃՈՒՐԴՆԵՐԻՆ ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Բանկը՝ իրավունք ունի գործակալ բանկի միջոցով իր անունից՝ իր հաշվին մրցակցային և ոչ մրցակցային առաջարկություններով մասնակցելու պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման աճուրդին :

2.2. Բանկը՝ պարտատոմսերի ձեռք բերման հայտեր կարող է ներկայացնել, մինչև աճուրդի օրվա ժամը 10:00-ը:

2.3. Բանկն իրավունք ունի յուրաքանչյուր աճուրդի ոչ մրցակցային առաջարկություններ (ներառված են ինչպես դիլերի սեփական, այնպես էլ ներդրողների հանձնարարությամբ արված առաջարկությունները) ներկայացնել իր կողմից ներկայացված մրցակցային առաջարկությունների առավելագույնը 20 տոկոսի չափով:

2.4. Բանկն իրավունք ունի յուրաքանչյուր աճուրդի իր անունից իր հաշվին ներկայացնել առավելագույնը 20 մրցակցային և մեկ ոչ մրցակցային առաջարկություն:




ընդհանուր հասանելի

- 2.5. Բանկի կողմից յուրաքանչյուր թողարկման տեղաբաշխման աճուրդին ներկայացվող իր սեփական առաջարկությունների ծավալը չի կարող գերազանցել այդ թողարկման ծավալը:
- 2.6. Աճուրդին մասնակցելու համար Ֆինանսական շուկաներում գործառնությունների դեպարտամենտի (այսուհետ՝ Դեպարտամենտ) համապատասխան աշխատակիցներն աճուրդի օրը մինչև ժամը 09:30 նախապատրաստում են աճուրդին ներկայացվող հայտերը գործակալ բանկին ներկայացնելու համար, որոնց վրա Գանձապետի կամ Դեպարտամենտի տնօրենի կողմից կատարվում է նշագրում:
- 2.7. Հայտերը ստորագրում է Բանկի Վարչության նախագահը կամ համապատասխան տեղակալը՝ համաձայն Բանկի խորհրդի կողմից հաստատված սահմանաչափերի, որից հետո կնքվում է Բանկի կնիքով:
- 2.8. Աճուրդի օրը հայտերը, Դեպարտամենտի պատասխանատու աշխատակցի կողմից ժամը մինչև 10:00 ներկայացվում է գործակալ բանկին՝ էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով՝ Բանկի համապատասխան բաժնում տեղակայված ՍիԲիԷյՆԵթ համակարգի աշխատանքային կայանից:
- 2.9. Պարտատոմսերի գնման ծավալները պետք է բազմապատիկ լինեն տվյալ պարտատոմսի համար սահմանված քայլին:
- 2.10. Բոլոր գումարները նշվում են մեկ դրամի ճշտությամբ:
- 2.11. Ոչ մրցակցային առաջարկության մեջ նշվում է այն ծավալը, որի չափով Բանկը ցանկանում է պարտատոմսեր ձեռք բերել աճուրդում ձևավորված միջին կշռված եկամտաբերությամբ:

ԳԼՈՒԽ 3. ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

- 3.1. Պարտատոմսերի շրջանառությունը՝ երկրորդային շուկայում պարտատոմսերի օտարման հատուցելի և անհատույց գործարքների իրականացումն է:
- 3.2. Պարտատոմսերի օտարման հատուցելի գործարքները պարտատոմսերի առուվաճառքի, ռեպո (հակադարձ ռեպո), պարտատոմսերի փոխանակման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ թույլատրված գույքի հատուցելի օտարման այլ գործարքներն են:
- 3.3. Պարտատոմսերի օտարման անհատույց գործարքները պարտատոմսերի նվիրատվության, ժառանգելու գործարքներն են, ինչպես նաև իրավաբանական անձի վերակազմակերպման հետևանքով պարտատոմսերի օտարումը:
- 3.4. Առուվաճառքի գործարքների կնքման դեպքում գործարքի նախաձեռնող է գնորդը (ստացողը) կամ վաճառողը (առաքողը), որը ներկայացնում է համապատասխան հայտ կամ կնքում է պայմանագիր, որտեղ նշվում է գործարքի գինը և (կամ) ծավալը, եկամտաբերությունը, որքանով գործարքի մասնակիցը ցանկանում է գնել կամ վաճառել պարտատոմսեր:
- 3.5. Առուվաճառքի, ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների առարկա կարող են հանդիսանալ միայն այն պարտատոմսերը, որոնց նկատմամբ դրանց սեփականատիրոջ իրավունքները սահմանափակված չեն (ազատ արժեթղթերի կարգավիճակով դեպո հաշվում առկա պարտատոմսերը):
- 3.6. Բանկի կողմից երկրորդային շուկայում իրականացվող առքուվաճառքն իրականացվում է պայմանագրի հիման վրա:
- 3.7. Դեպարտամենտի համապատասխան աշխատակիցը կազմում է կամ ընդունում է գործարքը կատարող հակառակ կողմից պայմանագիրը, Դեպարտամենտի տնօրենը նշագրում է այն և ներկայացնում ստորագրման և կնքման:
- 3.8. Բանկի կողմից պայմանագիրը ստորագրում է Բանկի Վարչության նախագահը կամ նրա համապատասխան տեղակալը, համաձայն խորհրդի կողմից հաստատված սահմանաչափերի, որից հետո կնքվում է պայմանագիրը:

	Պետական պարտատոմսերով գործառնությունների իրականացման կարգ	Կողմ 08.02.5	Խմբագրություն՝ 2.0
		Հաստատված է Բանկի Խորհրդի 17.05.2018թ. որոշմամբ	

ընդհանուր հասանելի

3.9. Պայմանագրի բնօրինակը ներկայացվում է Հաշվապահական հաշվառման և ամփոփ հաշվետվությունների դեպարտամենտին:

3.10. Պարտատոմսերի ձեռք բերման ժամանակ՝ ձեռք բերված պարտատոմսերի հաշվապահական ձևակերպումները կատարելու և Վաճառող կողմին համապատասխան գումարը փոխանցելու համար:

3.11. Պարտատոմսերի վաճառքի ժամանակ՝ Վաճառքից ստացված գումարի հաշվապահական ձևակերպումներ կատարելու, վաճառված պարտատոմսերը փոխանցելու համար:

3.12. Վաճառված պարտատոմսերի փոխանցումը կատարվում է՝ Դեպարտամենտի համապատասխան աշխատակցի կողմից կազմված, Դեպարտամենտի տնօրենի կողմից նշագրված, Խորհրդի կողմից հաստատված սահմանաչափերին համաձայն՝ Բանկի Վարչության նախագահ, կամ նրա համապատասխան տեղակալի և Գլխավոր հաշվապահի կողմից ստորագրված և կնքված պարտատոմսի առաքման հանձնարարականի հիման վրա:

3.13. Պարտատոմսերի առուվաճառքը կարող է իրականացվել ‘ազատ առաքման’ առանց DVP (միակողմանի) սկզբունքով, կամ ‘առաքում’ վճարման դիմաց՝ DVP (երկկողմանի) սկզբունքով:

3.14. Եթե առուվաճառքի պայմանագրով նախատեսված է դրամական հաշվարկների իրականացում կանխիկ եղանակով, ապա դեպո հաշվարկներն իրականացվում են ‘ազատ առաքման’ սկզբունքով:

3.15. Եթե առուվաճառքի պայմանագրով նախատեսված է դրամական հաշվարկների իրականացում անկանխիկ եղանակով՝ կանխավճարի կամ ապառիկ վաճառքի պայմաններով, ապա դեպո հաշվարկներն իրականացվում են ‘ազատ առաքման’ սկզբունքով:

3.16. Եթե առուվաճառքի պայմանագրով նախատեսված է դրամական հաշվարկների իրականացում անկանխիկ եղանակով՝ Պարտատոմսերի և դրամական միջոցների միաժամանակ առաքման պայմանով, ապա դեպո և դրամական հաշվարկներն իրականացվում են ‘առաքում վճարման դիմաց’ սկզբունքով:

ԳԼՈՒԽ 4. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ


4.1. Բանկը կարող է իրականացնել պահառության գործունեություն՝ համաձայն ‘ՀՀ պետական պարտատոմսերի պահառության գործունեության մասին’ կարգի, ինչպես նաև հաճախորդի հետ կնքված պահառության պայմանագրի:

4.2. Բանկը՝ որպես ենթապահառու, պահառության ծառայություններ է մատուցում և Դեպարտամենտը հաճախորդի անունով դեպո հաշիվ է բացում՝ հաճախորդի հետ կնքված պահառության պայմանագրի հիման վրա:

4.3. Պահառության պայմանագիրը կնքվում է գրավոր:

4.4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը (իսկ այդպիսիք սահմանված չլինելու դեպքում՝ Բանկի կողմից սահմանված փաստաթղթերը) հաճախորդի կողմից Բանկին ներկայացնելուց հետո Դեպարտամենտի համապատասխան աշխատակիցը կազմում է պայմանագիրը, որը նշագրում է Դեպարտամենտի տնօրենը և վավերացնում Բանկի Վարչության նախագահը կամ նրա համապատասխան տեղակալը:

4.5. Առանց պահառության պայմանագրի առկայության հաճախորդի անունով կարող է բացվել դեպո հաշիվ միայն այլ ենթապահառուի գործունեության դադարեցման հետևանքով վերջինիս հաճախորդների պարտատոմսերը Բանկի մոտ փոխանցելու, կամ հաճախորդի դեպո հաշիվը հայտնի չլինելու պարագայում՝ նրա սեփականությանը պարտատոմսերը փոխանցելու դեպքում: Սակայն այդ հաշիվներով գործառնություններ կարող են կատարվել միայն հաճախորդի հետ պահառության պայմանագիրը կնքելուց հետո:

	Պետական պարտատոմսերով գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 08.02.5	Խմբագրություն՝ 2.0
		Հաստատված է Բանկի Խորհրդի 17.05.2018թ. որոշմամբ	

ընդհանուր հասանելի

- 4.6. Ներդրողների դեպո հաշիվները բացվում են ՀՀ ԿԲ-ի կողմից մշակված ‘Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների համակարգում կիրառվող հաշվեհամարների կողավորման’ կարգի համաձայն:
- 4.7. Պահառության պայմանագիրը պետք է համապատասխանի ՀՀ ԿԲ կողմից մշակված ՀՀ պետական պարտատոմսերի պահառության գործունեության մասին կարգում նշվող դրույթներին:
- 4.8. Պահառության պայմանագրի կնքումը և դեպո հաշվի բացումը չի պահանջում պարտատոմսերի անմիջապես մուտքագրում դեպո հաշվի վրա:
- 4.9. Բանկի՝ որպես ենթապահառուի, կողմից իրականացվող պարտատոմսերի պահառության գործունեության հիմնական պայմանները հանդիսանում են Բանկի և հաճախորդի միջև կնքվող պահառության պայմանագրի անբաժանելի մասը, կրում են հրապարակային բնույթ և պետք է հասանելի լինեն շահագրգիռ անձանց:
- 4.10. Բանկը պետք է տեղեկացնի հաճախորդներին պարտատոմսերի պահառության գործունեության հիմնական պայմաններում կատարված փոփոխությունների մասին՝ դրանց ուժի մեջ մտնելուց առնվազն երկու շաբաթ առաջ:

ԳԼՈՒԽ 5. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

- 5.1 Բանկում ներդրողների սպասարկումն իրականացվում է պահառության պայմանագրի հիման վրա, որը կազմվում է Դեպարտամենտի համապատասխան աշխատակիցի կողմից, նշագրվում է Գանձապետի կամ Դեպարտամենտի տնօրենի կողմից և ստորագրվում է Բանկի Վարչության նախագահի կամ նրա համապատասխան տեղակալի կողմից:
- 5.2 Ներդրողի համար բացվում է դեպո հաշիվ, շնորհելով ծածկագիր, որտեղ հաշվառվում են տվյալ ներդրողին պատկանող պարտատոմսերը:
- 5.3 Տրամադրված դեպո հաշվի ծածկագիրը չի հանդիսանում առևտրային գաղտնիք և այն նշվում է ներդրողի բոլոր հայտերում, պայմանագրերում և տրամադրվող քաղվածքներում:
- 5.4 Ներդրողի համար առաջնային տեղաբաշխման աճուրդին մասնակցությունը կատարվում է ներդրողի կողմից ներկայացված համապատասխան հայտի հիման վրա, որն ընդունվում է Դեպարտամենտի աշխատակցի կողմից:
- 5.5 Աճուրդից հետո ներդրողը տեղեկացվում է աճուրդի արդյունքների մասին, և հայտի բավարարման դեպքում տրամադրվում է դեպո հաշվից քաղվածք՝ ձեռք բերված պարտատոմսերի վերաբերյալ:
- 5.6 Դեպո հաշվից քաղվածք տրամադրվում է նաև ներդրողի պարտատոմսերի ցանկացած շարժի դեպքում (առք, վաժառք, մարում, գրավադրում):

ԳԼՈՒԽ 6. ՌԵՊՈ ԵՎ ՀԱԿԱՂԱՐՁ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

- 6.1. Ռեպո/հակադարձ ռեպո գործարք է համարվում այն գործարքը, որով վաճառողը գնորդին օտարում է արժեթուղթ՝ մարման օրը դրանք ետ գնելու և սահմանված տոկոսագումար վճարելու պարտավորությամբ, իսկ գնորդը սեփականության իրավունքով ձեռք է բերում արժեթուղթը՝ դրանք մարման օրը վերավաճառելու պարտավորությամբ:
- 6.2. Բանկն իրականացնում է ռեպո և հակադարձ ռեպո գործարքներ՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ռեզիդենտ առևտրային բանկերի, ոչ բանկային ֆինանսական կազմակերպությունների և իր հաճախորդների հետ:
- 6.3. ՀՀ ԿԲ-ի հետ ռեպո և հակադարձ ռեպո գործարքներն իրականացվում են համաձայն Ռեպո և Հակադարձ ռեպո գործարքների կնքման գլխավոր համաձայնագրի:
- 6.4. ՀՀ ԿԲ-ի հետ ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքներն իրականացվում են ՀՀ ԿԲ կողմից նախօրոք հայտատարարված պայմաններով:



ընդհանուր հասանելի

6.5. Ոչ բանկային ֆինանսական կազմակերպությունների և իր հաճախորդների հետ գործարքներն իրականացվում են պայմանագրային հիմունքներով:

6.6. ՀՀ ԿԲ-ի հետ ռեպո և հակադարձ ռեպո գործարքներ իրականացնելու համար, գործարքի օրը ՀՀ ԿԲ-ի կողմից հայտը ներկայացնելու սահմանված ժամկետից առնվազն 30 րոպե առաջ Գանձապետի կամ Ֆինանսական շուկաներում գործառնությունների դեպարտամենտի տնօրենի նշագրումով պետք է պատրաստված լինի ուղարկվող հայտը և ներկայացվի ստորագրության Բանկի Վաչության նախագահ կամ նրա համապատասխան տեղակալի կողմից՝ Խորհրդի կողմից հաստատված սահմանաչափերին համաձայն:

6.7. Հայտը ստորագրվելուց հետո այն կնքվում է Բանկի կնիքով:

6.8. Հայտն ուղարկվում է Դեպարտամենտում տեղակայված համապատասխան համակարգի միջոցով:

6.9. Հայտի պաշտոնական պատասխանը ստանալուց հետո, Գանձապետը կամ Դեպարտամենտի տնօրենը տեղեկացնում է Բանկի Վարչության նախագահին կամ նրա համապատասխան տեղակալին:

6.10. Հաշվապահական հաշվառման և ամփոփ հաշվետվությունների դեպարտամենտը, հիմք ընդունելով ստացված հաղորդագրությունը և հայտի պատասխանը, նույն օրը կատարում է հաշվապահական ձևակերպումները:

ԳԼՈՒԽ 7. ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Բանկի ղեկավարներին, ծառայողներին, նախկինում ղեկավար կամ ծառայող հանդիսացող անձանց, ինչպես նաև այն անձանց ու կազմակերպություններին, որոնք Բանկին ծառայություններ են մատուցում կամ մատուցել են նախկինում, արգելվում է ծառայության կամ աշխատանքի կապակցությամբ իրենց վստահված կամ հայտնի դարձած ծառայողական տեղեկություն հրապարակելը, ինչպես նաև երրորդ անձանց շահերից ելնելով՝ դրանք օգտագործելը կամ անուղակիորեն ընձեռելը (թույլատրել, չխոչընդոտել կամ այդ տեղեկության պահպանման կարգի խախտման հետևանքով դրա հրապարակումը հնարավոր դարձնելը):

ԳԼՈՒԽ 8. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

8.1 Բանկը վարում է առանձնացված հաշվառում յուրաքանչյուր ներդրողի, ինչպես նաև իր միջոցների համար Բանկում օգտագործվող համակարգչային ծրագրի միջոցով:

8.2 Բանկը պատշաճ միջոցառումներ է ձեռնարկում ներդրողին պատկանող միջոցների և իրավունքների պաշտպանվածությունը ապահովելու համար, ինչպես նաև ապահովում է ներդրողների միջոցների հաշվառումը համաձայն կնքված պայմանագրի:

8.3 Բանկը չի կարող իր ներդրողի միջոցները օգտագործել ի շահ իրեն, եթե այլ բան սահմանված չէ Բանկի և ներդրողի միջև կնքված գրավոր պայմանագրով:

8.4 Բանկն իրավունք ունի գրավադրելու ներդրողի միջոցները միայն վերջինիս հետ կնքված գրավոր համաձայնության հիման վրա:

8.5 Բանկը վարում է առանձին հաշիվներ յուրաքանչյուր ներդրողի համար:

8.6 Ներդրումային ծառայություններ մատուցելիս գրանցումները ստացված և կատարված հանձնարարականների վերաբերյալ արտացոլվում է Բանկում օգտագործվող համակարգչային ծրագրում: